ԻՆՉՈՒ՞ ԽԱՉԸ

ՊԱՐՏԵԶԸ, ՎԱՐԱԳՈՒՅՐԸ և ԽԱՉԸ

Հասկանալու համար, թե ինչու է Խաչը կարևոր մարդկության փրկության համար, մենք պետք է հասկանանք Եդեմի պարտեզում բարու և չարի գիտության ծառի առեղծվածը:

Ծննդոց 2:16-17** – 16 **Տեր Աստված պատվիրեց մարդուն՝ ասելով. Պարտեզի բոլոր ծառերից համարձակ կեր, 17 բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կեր, որովհետև այն օրը, երբ նրանից ուտես, անպայման կմեռնես:

*Ծննդոց 3:6-7 – 6 Կինը տեսավ, որ ծառի պտուղը լավ էր ուտելու համար և հաճելի էր աչքերին, և որ ծառը ցանկալի էր նայելու համար. առավ նրա պտղից ու կերավ և տվեց նաև իր ամուսնուն, և նա կերավ: 7 Եվ նրանց երկուսի **աչքերը բացվեցին**, և իմացան, որ մերկ են, և թզենու տերևներ կարեցին ու իրենց համար **ծածկոցներ շինեցին:***

14 Տեր Աստված ասաց օձին. Քանի որ դու արեցիր այդ, անիծյալ լինես բոլոր անասունների և դաշտային բոլոր կենդանիների մեջ. փորիդ վրա գնաս և հող ուտես կյանքիդ բոլոր օրերին: 15 Ես թշնամություն եմ դնում քո և կնոջ միջև, քո սերնդի և նրա սերնդի միջև. նա քո գլուխը կջախջախի, իսկ դու կխայթես նրա գարշապարը:

*17 Ադամին ասաց. Քանի որ դու լսեցիր քո կնոջ խոսքին և կերար այն ծառից, որի համար պատվիրեցի քեզ՝ ասելով. "Դրանից չուտե՛ս", անիծյալ լինի երկիրը. քո պատճառով նեղությամբ ուտես դրանից քո կյանքի բոլոր օրերին: 18 Նա փուշ ու տատասկ աճեցնի քեզ համար, և դու դաշտի խոտն ուտես: **Եվ Տեր Աստված Ադամի ու նրա կնոջ համար կաշվից հանդերձներ պատրաստեց և հագցրեց նրանց:***

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. Բ ՕՐԻՆԱՑ 21:22-23, ԳԱՂԱՏԱՑԻՍ 3:13

22 Եթե մեկը մահապատժի արժանի մեղք գործի, նա պետք է մեռցվի. դու նրան կկախես ծառից:
23 ...որովհետև կախված մարդը Աստծուց անիծված է:

*Գաղատացիս 3:13 – Քրիստոսը մեզ **օրենքի անեծքից** փրկագնեց՝ մեզ համար անեծք դառնալով (քանզի գրված է. Անիծյալ լինի յուրաքանչյուր ոք, ով կախվում է փայտից (Բ Օր. 21.23):*

*Հով. 3:14-16 – 14 Եվ ինչպես Մովսեսն անապատում **օձին բարձրացրեց**, այնպես էլ Մարդու Որդին պետք է բարձրանա, 15 որպեսզի ով նրան հավատում է, հավիտենական կյանք ունենա: 16 Աստված այնքան սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով նրան հավատում է, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա:*

1 Կոր. 1:18 - Որովհետեւ խաչի խօսքը կորածների համար հիմարութիւն է, բայց մեզ փրկուածներիս համար Աստուծոյ զօրութիւն է:

1. ԽԱՉՆ ՈՒՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՋԱՏԵԼՈՒ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ:

Գործք Առաքելոց 5:30 – Մեր հայրերի Աստվածը հարություն տվեց Հիսուսին, որին դուք <u>փայտից կախելով սպանեցիք</u>:

Գործք Առաքելոց 10:39 – Եվ մենք վկա ենք այն ամենին, ինչ նա արեց հրեաների երկրում և Երուսաղեմում, որին <u>սպանեցին՝ փայտից կախելով</u>:

Գործք Առաքելոց 13:29 – Երբ նրա մասին գրված ամեն բան կատարեցին, <u>փայտից իջեցրին ու գերեզման դրեցին</u>:

2. ԽԱՉՆ ԻՆՁ ՀԻՇԵՑՆՈՒՄ Է ԻՄ ՄԵՂՔԵՐԻ ԳԻՆԸ, ՈՐ ՀԻՍՈՒՍԸ ՎՃԱՐԵՑ:

*Ա Պետրոս 2:24 – Նա մեր մեղքերն իր մարմնով խաչափայտի վրա բարձրացրեց, որպեսզի մեղքերից հեռանալով՝ **<u>արդարության համար ապրենք</u>**. դուք նրա վերքերով բժշկվեցիք:*

> *2 Կոր. 5:21 - 21 Որովհետեւ Աստուած նորան, որ մեղք չգիտէր, մեզ համար մեղք արաւ. որ մենք Աստուծո արդարությունը լինենք նորանում: Նրանով փրկություն ունենք իր արյան միջոցով, մեղքերի թողություն՝ համաձայն իր շնորհի առատության (Եփ. 1:7): Ուրախանանք և ցնծանք ու փառք տանք նրան, որովհետև Գառան հարսանիքը հասավ, և նրա կինը պատրաստեց ինքն իրեն: Նրան տրվեց, որ հագնի սպիտակ, մաքուր և լուսափայլ բեհեզե, որովհետև բեհեզը սրբերի արդարությունն է (Հայտ. 19:7-8):*

3. ԽԱՉՆ ԻՆՁ ՀԻՇԵՑՆՈՒՄ Է ԳԵԹՍԵՄԱՆԻ ԵՎ ԵԴԵՄԻ ՊԱՐՏԵԶՆԵՐԸ:

*Ծննդոց 3:24 – Եվ արտաքսեց Ադամին և Եդեմի պարտեզի դիմացը դրեց Քերովբեներին և ամեն կողմ դարձող բոցեղեն սուրը՝ **<u>կենաց ծառի</u>** ճանապարհը հսկելու համար:*

- ***Մեզ համար շատ կարևոր է հասկանալ, որ խաչի միջոցով Քրիստոս մեզ ազատեց մեղքի իշխանությունից և բացեց դրախտի դուռը: Եվ Հիսուսը նրան ասաց. «Ճշմարիտ եմ ասում քեզ. դու այսօր ինձ հետ դրախտում կլինես» (Ղուկաս 23:43):***

  Հայտնություն 2:7 – <u>Հաղթողին</u> թույլ կտամ ուտել կենաց ծառից, որ Աստծու դրախտում է:

  Հայտնություն 22:1-5 – 1 Հրեշտակն ինձ ցույց տվեց կենաց ջրի գետը՝ փայլուն, ինչպես բյուրեղը, որ բխում էր Աստծու ու Գառան գահից: 2 Եվ նրա հրապարակի մեջտեղում՝ գետի այս ու այն կողմերում, կենաց ծառն էր, որ տասներկու պտուղ էր տալիս. ամեն ամիս իր պտուղն էր տալիս, իսկ ծառի տերևները ազգերին բժշկելու համար էին: 3 Այնտեղ այլևս նզովք չի լինելու: Աստծու ու Գառան գահը նրա մեջ է լինելու, և նրա ծառաները պաշտելու են նրան: 4 Եվ տեսնելու են նրա երեսը, և նրա անունը նրանց ճակատների վրա է լինելու: 5 Այնտեղ գիշեր չի լինելու. ճրագի և արեգակի լույսի կարիք չի լինելու, որովհետև Տերը՝ Աստված է լուսավորելու նրանց, և պիտի թագավորեն հավիտյանս հավիտենից:

  14 Երանելի են նրա պատվիրանները պահողները, որովհետև նրանցն է իշխանությունը կենաց ծառի վրա և քաղաքի դռնով ներս մտնելու:

Նոր Կտակարանում «խաչ» բառը հիշատակվում է 35 անգամ.

Ղուկաս 9:23 – Եվ բոլորին ասում էր. Եթե մեկն ուզում է իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա, ամեն օր իր խաչն առնի ու իմ հետևից գա:

Հով. 19:17-19 - Նա ինքն էր խաչը վերցրել և գնում էր այն տեղը, որ Գագաթ էր կոչվում, որ եբրայերեն Գողգոթա է կոչվում: Այնտեղ նրան խաչը հանեցին և նրա հետ՝ ևս երկու հոգու՝ այս և այն կողմից, իսկ Հիսուսին՝ մեջտեղում: Պիղատոսը մի տախտակի վրա գրեց և դրեց խաչի վրա. գրված էր՝ ,ՀԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ, ՀՐԵԱՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐԵ:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ